**Արձանագրություն N 2**
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան | 07 դեկտեմբերի 2023թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նիստը նախագահող՝ Լիլիթ Աճեմյանը
անդամ՝ Սուսաննա Սարգսյան
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Արբակ Սանամյանը

**I. Հայտերի բացման մասին**

---------------------------------------------------------------------------

(Լիլիթ Աճեմյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | *Մասնակցի անվանումը* | | *Մասնակցի հասցեն և կապի միջոցները* |
|---|---|---|---|
| 1 | *2* | | *3* |
| 1 | «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | - | ք. Երևան, Լենինգրադյան փող. 23/11 շենք, 96 տարածք, հեռ. +37460700111, info@isolutions.am |

բ/ Մասնակցի կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գինը հետևյալն է.

| Հ/Հ | Մասնակցի | |
|---|---|---|
| | անվանումը | առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) |
| 1 | 2 | 3 |
| 1 | «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | 20000000 |
| գնման գինը (ՀՀ դրամ) | | 25000000 |

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**II. Հայտերի գնահատման մասին**

---------------------------------------------------------------------------

(Լիլիթ Աճեմյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը և արձանագրեց, որ.

«ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած դիմում-հայտարարությունը /հավելված 1/ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

1) ներկայացված դիմում-հայտարարության 1-ին կետի հայտարարությունը՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջների վերաբերյալ, չի համապատասխանում հրավերով սահմանված

վավերապայմաններին (ներկայացված չէ մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ հայտարարությունը, ներկայացված չէ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորություն ստանձնող ընկերության անվանումը):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ -ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2023թ. դեկտեմբերի 11-ին ժամը 10:20-ին ք. Երևան, Նալբանդյան 13, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նիստը նախագահող | ________ | Լիլիթ Աճեմյան |
| անդամ՝ | ________ | Սուսաննա Սարգսյան |
| քարտուղար՝ | ________ | Գ. Ջանջուղազյան |

**Արձանագրություն N 3**
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 դեկտեմբերի 2023թ
ժամը 10:20

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝ Արբակ Սանամյանը
անդամներ՝ Լիլիթ Աճեմյանը, Սուսաննա Սարգսյան
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Հայտերի գնահատման արդյունքների մասին**

---

(Արբակ Սանամյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Սահմանված ժամկետում «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները:
2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած փաստաթուղթը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
Հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքներով որոշեց.
ա/ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

**II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին**

---

(Արբակ Սանամյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:
Ընտրված մասնակից է ճանաչվել բավարար գնահատված և էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

**III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

---

(Արբակ Սանամյան)

4. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված պայմաններով՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| նախագահ | | Արբակ Սանամյան |
| անդամներ՝ | | Լիլիթ Աճեմյանը, |
| | | Սուսաննա Սարգսյան |
| քարտուղար՝ | | Գ. Ջանջուղազյան |

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 07 դեկտեմբերի 2023թ.

ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը նախագահող՝ Լիլիթ Աճեմյանս, անդամ՝, Սուսաննա Սարգսյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող ____________________ Լիլիթ Աճեմյան

անդամներ՝ ____________________ Սուսաննա Սարգսյան

քարտուղար՝ ____________________ Գ. Ջանջուղազյան